2022, № 1, 46-60 *Քաղաքագիտություն*
https://doi.org/10.46991/BYSU:D/2022.13.1.046

ԷԹՆՈՉԱՓԱԳԻՏԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԽԱՉԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ

Սույն հետազոտության հիմնական նպատակը էթնոչափագիտական մեթոդաբանության գործիքակազմի կիրառման միջոցով ժողովրդավարական անցման օրինաչափությունները բացահայտելն է: Հոլանդացի հետազոտող Գ. Հոֆսթեդի առաջ քաշած էթնոչափագիտական մեթոդաբանությունը նախկինում կիրառվել է տարբեր երկրների գործարար մշակույթի, ինչպես նաև քաղաքական կոնֆլիկտների և բռնության երևույթների միջև կապերը բացահայտելու համար:

Հոդվածում ժողովրդավարության «երրորդ ալիքի» երկրների ժողովրդավարական անցման փորձի համատեքստում դիտարկվում են Գ. Հոֆսթեդի էթնոչափագիտական չորս հիմնական՝ իշխանությունից հեռավորության (PDI), առնականության (MAS), անորոշություններից խուսափելու (UAI) և անհատականության (IDV) ցուցիչները: Մասնավորապես հիմնավորվել են, որ իշխանությունից ունեցած մեծ հեռավորության ցուցիչների (PDI) պարագայում ժողովրդավարության համախմբման գործընթացները դանդաղում են և չեն նպաստում երկխոսույթային պրակտիկաների ձևավորմանը: Իսկ «երկխոսույթային ձգողականության» առկայության դեպքում քաղաքական հիմնական դերակատարները՝ իշխանությունն ու ընդդիմությունը, ցուցաբերում են որոշակի քաղաքական կամք և ձգտում հասարակության մեջ կուտակված խնդիրները, այդ թվում և իշխանության ռեսուրսների անհավասարաչափ բաշխումը մեղմել, գործընթացներն ուղղորդել դեպի ինստիտուցիոնալ քաղաքական երկխոսության դաշտ:

Հոդվածում քննության առարկա են դառնում ժողովրդավարական անցման հարացույցը, ժողովրդավարական անցումների համատեքստում երկխոսության մշակույթի ունեցած դերը, էթնոչափագիտական մեթոդաբանության լույսի ներքո այդ երևույթների միջև առկա կապերն ու օրինաչափությունները:

Բանալի բառեր – *էթնոչափագիտություն, քաղաքական երկխոսության մշակույթ, ժողովրդավարական անցում, իշխանությունից հեռավորության (PDI) ցուցիչ, առնականության (MAS) ցուցիչ, անորոշություններից խուսափելու (UAI) ցուցիչ, անհատականության (IDV) ցուցիչ*

XX դարի վերջին քառորդի քաղաքագիտական հետազոտություններում մեծ տեղ էր գրավում ժողովրդավարական անցման հարացույցը: Բանն այն է, որ այդ ժամանակահատվածը շատերն են բնորոշում որպես

գլոբալ ժողովրդավարացման դարաշրջան, երբ աշխարհով մեկ մեծ թափ առած ազատականացման ու ժողովրդավարացման ալիքը «չխնայեց» նույնիսկ անսասան թվացող այնպիսի ամբողջատիրական ու ինքնակալական վարչակարգերի, ինչպիսիք հաստատվել էին Հարավային, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում, Խորհրդային Միությունում և այլն: Բնական է, որ աշխարհում տեղի ունեցած կամ դեռ սպասվող համերկրային փոփոխությունները պետք է իրենց վրա բևեռեին նաև քաղաքագիտական լայն շրջանակների ուշադրությունը, փորձեր արվեին մշակելու գիտատեսական ու գործնական-կիրառական նոր մոտեցումներ ու հայեցակարգեր: Դրանց թվին է անշուշտ պատկանում նաև ժողովրդավարական անցման (տրանզիտ) հարացույցը, որն էլ հետագայում քաղաքագիտության շրջանակներում մի ամբողջական նոր ուղղության՝ անցումնաբանության (տրանզիտոլոգիա) ձևավորման հիմք դարձավ:

Խորհրդային Միության կազմալուծումից հետո Հայաստանի Հանրապետությունը հետխորհրդային նորանկախ երկրներից շատերի նման սկսեց քաղաքական համակարգի ժողովրդավարացման, քաղաքական նոր իրողություններին համապատասխան պետական շինարարության ու ինստիտուցիոնալ բարեփոխումների գործընթացը, որն այսօր էլ շարունակվում է: Այդ առումով կարող ենք փաստել, որ ՀՀ-ում ժողովրդավարությունը դեռևս կայացման ու կայունացման փուլում է: Միաժամանակ պետք է նշել, որ մեր հանրապետությունում այդ գործընթացն արագ ու արդյունավետ վերջնակետին հասցնելու գործում կարևոր դերակատում կարող են ունենալ երկխոսույթային պրակտիկաների ներդրումն ու քաղաքական երկխոսության մշակույթի ձևավորումը:

Ընդհանրապես կան հասարակություններ, որոնք բնորոշվում են կոնֆլիկտայնության բարձր աստիճանով, որտեղ հարցերի լուծման ուժային տարբերակների նախապատվությունը ասես «արյան» մեջ է, սերնդից սերունդ փոխանցվող «բացարձակ ճշմարտություն» է հիշեցնում, իսկ դրանց հաճախականությունը մարդկանց սովորական, առօրյա կենսակերպի մաս է կազմում: Նման բևեռացված հասարակություններում, բնականաբար, երկխոսություններն ու բանակցությունները դիտվում են որպես «թուլության նշան», որպես ընդհանուր կանոններից շեղում և լայն տարածում չունեն հասարակական-քաղաքական պրակտիկայում:

Իսկ այն հասարակությունները, որտեղ գերակայում են կոնֆլիկտների խաղաղ լուծման պրակտիկաները, համաձայնության և հանդուրժողականության արժեքները, բնականաբար ավելի մոտ են ժողովրդավարական արժեքներին, և հավանականությունը մեծ է, որ ժողովրդավարական անցումները նման տիպի արժեքային դաշտ ունեցող երկրներում ավելի արագ տեղի կունենան: Այս թեզի իսկությունը բացահայտելու ժողովրդավարական անցումների համատեքստում երկխոսության մշակույթի դերակատարումն ավելի լիարժեք պատկերացնելու համար հարկ ենք համարում անդրադառնալ էթնոչափագիտական մեթոդաբանությանը, որն ա-

ռաջ է քաշել հոլանդացի գիտնական Գ. Հոֆսթեդը: Մասնավորապես, նրա ձևավորած հետազոտական խմբի ուսումնասիրությունները, որոնք հիմնականում վերաբերում էին տարբեր երկրների գործարար մշակույթի առանձնահատկությունները բացահայտելուն, ժամանակին ընդգրկել են աննախադեպ ծավալներ՝ ներառելով 116 հազար հարցվողների շուրջ 70 երկրներից[1]: 1966 թ. սկիզբ առած հետազոտությունը հիմնականում ընդգրկում էր IBM անդրազգային կորպորացիայի բոլոր մակարդակներում ներառված աշխատակիցների հարցախույզը և, ինչպես արդեն նշվեց, ավելի շատ ուղղված էր տարբեր ազգերին բնորոշ գործարար մշակույթի ձևավորման առանձնահատկությունները բացահայտելուն: Սակայն հետագայում՝ արդեն 1990-ականներին, հոլանդական հետազոտողների խումբը փորձ արեց ուսումնասիրելու պետության ներսում կիրառվող քաղաքական բռնության կախվածությունն այնպիսի գործոններից, ինչպիսիք են բնակչության խտությունը, տնտեսական զարգացման աստիճանը, ժողովրդավարության, մշակույթի և շրջակա միջավայրի, բնակլիմայական պայմանների ազդեցությունը: Այս հետազոտությունը կառուցված էր աշխարհի արդեն 136 երկրների վիճակագրական տվյալների ու նախկինում իրականացված ուսումնասիրության մեթոդաբանական հիմքի վրա[2]:

Գ. Հոֆսթեդի էթնոմետրիկական մեթոդաբանությունը հենվում է մի քանի ցուցիչ-ինդիկատորների վրա, ինչպիսիք են իշխանությունից հեռավորությունը (PDI- Power Distance), անորոշություններից խուսափելը (UAI-Uncertainty Avoidance), անհատապաշտությունը (IDV-Individualism), առնականությունը (MAS-Masculinity), կոնֆուցիական ներդաշնակությունը (CDI-Confucian Dynamism): Իր վերջին հետազոտություններում Գ. Հոֆսթեդն առաջ է քաշում նաև վեցերորդ ցուցիչը՝ պահանջմունքների նկատմամբ զսպվածությունը (Indulgence)[3]:

Տարբեր երկրների գործարար մշակույթի հիմնական գծերը բացահայտելուց զատ՝ այս մեթոդաբանության առանձնահատկությունն այն է, որ որոշակի իմաստով ունիվերսալ է և անհրաժեշտության դեպքում կարող է կիրառվել նաև հետազոտական այլ նպատակներով: Ինչպես արդեն նշեցինք, նույն Հոֆսթեդը էթնոմետրիկական մեթոդաբանությունը փորձեց կիրառել նաև քաղաքական կոնֆլիկտների և բռնության երևույթների միջև կապերը բացահայտելու համար:

Իսկ հնարավո՞ր է արդյոք այս մեթոդաբանությունը կիրառել քաղաքական գործընթացները, մասնավորապես ժողովրդավարական

---

[1] Ավելի մանրամասն տե՛ս **Латова Н.** Культурологический подход к межгосударственным и межнациональным конфликтам: возможности и перспективы // Современная конфликтология в контексте культуры мира / под ред. Степанова Е./, М., 2001, էջ 523-536, Категоризация культуры по Г. Хофстеде: концепция «ментальных программ»// Основы межкультурной коммуникации, М., 2003, էջ 243-251:

[2] Տե՛ս **Латова Н.,** նշվ. աշխ., էջ 524:

[3] Տե՛ս **Hofstede G.** Dimensionalizing Cultures: The Hofstede Model in Context. Online Readings in Psychology and Culture, 2011, Unit 2. http://scholarworks.gvsu.edu/orpc/vol2/iss1/8 (մուտք՝ 19.01.2022):

բարեփոխումների գործընթացը դիտարկելու և երկխոսության մշակույթի միջև եղած կապերը բացահայտելու համար: Կարծում ենք՝ այո. հիմա փորձենք հիմնավորել: Բանն այն է, որ հոֆսթեդյան մեթոդաբանության մի քանի ցուցիչներ ավելի շատ առնչվում են մարդկանց քաղաքական վարքագծին, քան գործարար կամ այլ նախապատվություններին: Դրանցից ամենավառ արտահայտվածը իշխանությունից հեռավորությունն է (Power Distance Index): Ըստ հոլանդացի գիտնականի՝ իշխանությունից հեռավորության (PDI) ցուցիչով չափվում են ինստիտուտներում և կազմակերպություններում իշխանության անհավասարաչափ բաշխման վերաբերյալ մարդկանց պատկերացումները, թե որքանով են նրանք պատրաստ ընդունելու այդ անհավասարությունը: Իհարկե, իշխանությունն ու անհավասարությունը մարդկային բոլոր հասարակություններին էլ բնորոշ հիմնարար հարցադրումներից են, պարզապես, ըստ Հոֆսթեդի, խնդիրն այն է, թե այս կամ հասարակությունում ինչ խորությամբ է արտահայտվում այդ անհավասարությունը:

Ժողովրդավարական անցման համատեքստում իշխանությունից հեռավորության խնդիրն ու սոցիալական արդարության հիմնահարցը, ըստ էության, ժողովրդավարական համախմբման կոնտեքստուալ հիմնախնդիրներից, որ առանձնացնում է նաև Ս. Հանթինգտոնը: Հոֆսթեդյան հետազոտության աշխարհագրության ու ըստ իշխանությունից հեռավորության (PDI) ցուցիչի կազմած քարտեզում տեղ գտած «ժողովրդավարության երրորդ ալիքի» երկրների մեծ մասում այն միջին և բարձր (100 բալանոց համակարգում 45-ից բարձր) ցուցանիշ է արձանագրել[4]: Ըստ այդմ էլ կարելի է առաջ քաշել մի քանի հետազոտական վարկածներ:

Վարկած 1: Իշխանությունից չափից մեծ հեռավորութունը դանդաղեցնում է ժողովրդավարության համախմբման գործընթացն ու չի նպաստում երկխոսույթային պրակտիկաների ձևավորմանը: Այդ վարկածի օգտին է խոսում այն փաստը, որ ըստ PDI ցուցիչի՝ Գ. Հոֆսթեդի կազմած «վարկանիշային» ցուցակի՝ 14 երկրներից (որոնց PDI-ը 80 և ավելի է) ոչ մեկն այդպես էլ ժողովրդավարության համախմբման փուլը չի հաղթահարել, դեռ ավելին՝ դրանցից շատերը իրենց «պատվավոր տեղը» կարող են զբաղեցնել աշխարհի ամենաավտորիտար երկրների շարքում *(տե՛ս աղյուսակ 1):*

Այս համատեքստում, եթե բարձր PDI-ը վկայում է կառավարման ավտորիտար միտումների մասին, ապա լրիվ հակառակ պատկերն է 40-ից ցածր PDI ունեցող երկրների պարագայում, որոնց գերակշիռ մասը ժամանակակից ժողովրդավարական երկրներից են: Այստեղ առանձնացված 15 երկրներից 10-ը ներկայացնում են եվրոպական մայրցամաքը *(տե՛ս աղյուսակ 2):*

---

[4] Տե՛ս **Power Distance Index**, http://www.clearlycultural.com/geert-hofstede-cultural-dimensions/power-distance-index/ (մուտք՝ 19. 01.2022):

Աղյուսակ 1

Երկրների հերթականությունն ըստ իշխանությունից հեռավորության դասիչի (Power Distance Index)[5]

Երկիրը	**PDI**	IDV	MAS	UAI
Մալայզիա	**104**	26	50	36
Գվատեմալա	**95**	6	37	101
Պանամա	**95**	11	44	86
Ֆիլիպիններ	**94**	32	64	44
Մեքսիկա	**81**	30	69	82
Վենեսուելա	**81**	12	73	76
Չինաստան	**80**	20	66	40
Եգիպտոս	**80**	38	52	68
Իրաք	**80**	38	52	68
Քուվեյթ	**80**	38	52	68
Լիբանան	**80**	38	52	68
Լիբիա	**80**	38	52	68
Սաուդյան Արաբիա	**80**	38	52	68
ԱՄԷ	**80**	38	52	68

Աղյուսակ 2

Իշխանությունից հեռավորության ցածր PDI (Power Distance Index) ունեցող երկրները[6]

Երկիրը	**PDI**	IDV	MAS	UAI
ԱՄՆ	**40**	91	62	46
Նիդեռլանդներ	**38**	80	14	53
Ավստրալիա	**36**	90	61	51
Կոստա Ռիկա	**35**	15	21	86
Գերմանիա	**35**	67	66	65
Մեծ Բրիտանիա	**35**	89	66	35
Շվեյցարիա	**34**	68	70	58
Ֆինլանդիա	**33**	63	26	59
Նորվեգիա	**31**	69	8	50
Շվեդիա	**31**	71	5	29
Իռլանդիա	**28**	70	68	35
Նոր Զելանդիա	**22**	79	58	49
Դանիա	**18**	74	16	23
Իսրայել	**13**	54	47	81
Ավստրիա	**11**	55	79	70

[5] Տե՛ս նույն տեղը։
[6] Տե՛ս նույն տեղը։

Հատկանշական է, որ այդ երկրներից ոչ մեկը չի մտնում «ժողովրդավարացման երրորդ ալիքի» մեջ, ինչը նշանակում է, որ դրանցում ժողովրդավարությունը հաստատվել է շատ ավելի վաղ, իսկ երկխոսույթային պրակտիկաները վաղուց հաստատված իրողություն են: Հետևաբար, եթե շարունակենք հետազոտական այս տրամաբանությունը, ապա կարող ենք առաջ քաշել հաջորդ վարկածը, որ քաղաքական երկխոսության ճանապարհով «ժողովրդավարության երրորդ ալիքն» անցած ու ժողովրդավարության համախմբումն ավարտած երկրների պարագայում նկատվում է որոշակի «երկխոսույթային ձգողականություն», ինչը համապատասխանում է PDI-ի միջին ցուցանիշներին (45-75): Մասնավորապես, ժողովրդավարության ալիքների համատեքստում դիտարկված երկխոսույթային անցում արձանագրած երկրները տեղավորված են հենց այդ միջակայքում *(տե՛ս աղյուսակ 3):*

Աղյուսակ 3

Երկխոսույթային ժողովրդավարական անցում արձանագրած երկրների իշխանությունից հեռավորության PDI ցուցանիշները[7]

Երկիրը	**PDI**	IDV	MAS	UAI
Լեհաստան	**68**	60	64	93
Պորտուգալիա	**63**	27	31	104
Հունաստան	**60**	35	57	112
Հարավային Կորեա	**60**	18	39	85
Չեխիա	**57**	58	57	74
Իսպանիա	**57**	51	42	86
Հունգարիա	**46**	55	88	82

Ինչո՞վ կարելի է սա բացատրել. նախնառաջ՝ «երկխոսույթային ձգողականության» առկայությամբ, որը թույլ է տալիս քաղաքական երկխոսության հիմնական կողմերին՝ իշխանությանն ու հասարակության ընդդիմադիր տրամադրված քաղաքական ուժերին և սոցիալական խմբերին, չհեռանալ իրարից, չայրել կամուրջները, ցուցաբերել որոշակի քաղաքական կամք, ձգտում հասարակության մեջ կուտակված խնդիրները, այդ թվում և իշխանության ու ռեսուրսների անհավասարաչափ բաշխումը մեղմել հենց քաղաքական երկխոսությունը ինստիտուցիոնալ հիմքի վրա դնելու ու երկխոսության մշակույթ ձևավորելու ճանապարհով: Հակառակ պարագայում, տվյալ պետության շրջանակներում հասարակության մեջ տնտեսական, սոցիալական, քաղաքական և այլ կարգի անարդարության և անհավասարության հաստատման հետևանքով (ինչը համընկնում է PDI-ի բարձր ցուցանիշների հետ) առաջացած հիասթափությունն ու ապատիան, ըստ Ս. Հանթինգտոնի, կարող են փոխակերպվել վարքագծային այնպիսի մոդելների, ինչպիսիք են՝ 1. իրավիճակին համակերպվելը կամ քաղաքականությունից օտարվելը

[7] Տե՛ս նույն տեղը:

(այդ թվում և հայաստանյան իրականությանը բնորոշ սոցիալական փախուստի կամ արտագաղթի տեսքով), 2. գործող ղեկավարության նկատմամբ անթաքույց բացասական վերաբերմունք արտահայտելը, 3. և՛ քաղաքական էլիտայի, և՛ ընդդիմության նկատմամբ միաժամանակյա բոյկոտը (որը թույլ է տալիս ակնհայտ հետնապահներին, ամբոխահաճո կարգախոսներով հանդես եկողներին գալ իշխանության), 4. առավել ծայրահեղ, հակաժողովրդավարական կարգախոսներով հանդես եկող քաղաքական ուժերի իշխանության գալը, որը հղի է ժողովրդավարության իսպառ կորստով[8]: Ինչպես երևում է, վերը թվարկված բոլոր վարքագծային մոդելները ժողովրդավարության համախմբման տեսանկյունից կարող են բացասաբար ազդել այդ գործընթացի վրա՝ խոչընդոտելով այն իր տրամաբական ավարտին հասցնելը:

Երկխոսության մշակույթի հետ ուղիղ պատճառահետևանքային կապ կարող է ունենալ նաև առնականության (MAS) ցուցիչը: Դեռ Հոֆսթեդն ու իր հետազոտական խումբն էին նկատել, որ ինչքան բարձր է առնականության ցուցանիշը, այնքան մեծ է հավանականությունը, որ տվյալ երկիրը կբախվի ներքին բռնությունների: Այդ կապակցությամբ նրանք առաջ են քաշում հետևյալ թեզը. առնականության ավելի բարձր ցուցանիշներ ունեցող մշակույթներում կոնֆլիկտային հարցերն ամենայն հավանականությամբ կլուծվեն ագրեսիայի, ճնշման միջոցով, քան բանակցությունների[9]: Եթե հաշվի առնենք, որ առնականություն (MAS) ասելով հեղինակները հասկանում են տղամարդկային այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են համառությունը, ինքնավստահությունը, ամեն կերպ հաջողության հասնելու ձգտումն ու մրցակցությունը, ապա նման եզրակացությունը լիովին կանխատեսելի է: Ընդ որում, ռուս հետազոտողներից Ն. Լատովան կարծում է, որ այդ ցուցիչի կիրառումը և դրա արդյունքները կարող են օգնել ոչ միայն ներքին քաղաքական բռնությունները, այլև պետությունների միջև միջմշակութային շփումներն ու փոխազդեցությունները կանխատեսելուն[10]: Այս դեպքում, բնականաբար, եթե առնականության բարձր ցուցանիշը խոսում է ագրեսիվության ու կոնֆլիկտայնության բարձր աստիճանի մասին, ապա առնականության ցածր տվյալներն էլ կարող են վկայել երկխոսության և բանակցությունների միջոցով վիճահարույց հարցերը կարգավորելու նախապատվությունների և փոխզիջումների գնալու ընդհանուր կարողությունների մասին: Ցածր MAS-ը վկայում է կանանց բնավորությանը բնորոշ այնպիսի արժեքային նախապատվությունների մասին, ինչպիսիք են հարմարավետության, ջերմ մարդկային

---

[8] Տե՛ս **Хантингтон С.** Третья волна. Демократизация в конце XX века, М., РОССПЭН, 2003, էջ 285-290:

[9] Տե՛ս **Van De Vliert E., Schwartz S., Huismans S., Hofstede G., Daan S**. Temperature, Cultural Masculinity and Political Violence // Journal of Cross-Cultural Psychology, 1999, V. 30, էջ 297:

[10] Տե՛ս **Латова Н.**, նշվ. աշխ., էջ 526:

հարաբերությունների պահպանման, համերաշխության ու խաղաղության արժեքները: Եթե դիտարկենք առնականության տվյալների հոֆսթեդյան աղյուսակը, ապա այստեղ նույնպես օրինաչափություններ կարող ենք հայտնաբերել: Օրինակ՝ բարձր MAS-ով աչքի են ընկնում համաշխարհային պատերազմներում ակտիվ դերակատարում ունեցած այնպիսի պետություններ, ինչպիսիք են Ճապոնիան, Ավստրիան, Հունգարիան, Իտալիան, Գերմանիան, Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ն և այլն: Այդ պետությունները բավականին բարձր տեղ են գրավում վարկանիշային աղյուսակում *(տե՛ս աղյուսակ 4):*

Աղյուսակ 4

Առնականության (MAS) բարձր ցուցանիշ ունեցող երկրները[11]

Երկիրը	PDI	IDV	**MAS**	UAI
Ճապոնիա	54	46	**95**	92
Հունգարիա	46	55	**88**	82
Ավստրիա	11	55	**79**	70
Իտալիա	50	76	**70**	75
Գերմանիա	35	67	**66**	65
Մեծ Բրիտանիա	35	89	**66**	35
Հարավային Աֆրիկա	49	65	**63**	49
ԱՄՆ	40	91	**62**	46

Հակառակ պատկերն է այդ չափորոշիչով ցածր ցուցանիշներ ունեցող երկրներում՝ Շվեդիա, Նորվեգիա, Նիդեռլանդներ, Դանիա, Ֆինլանդիա, Կոստա Ռիկա, Պորտուգալիա, Չիլի, Գվատեմալա և այլն *(տե՛ս աղյուսակ 5):*

Աղյուսակ 5

Առնականության (MAS) ցածր ցուցանիշներ արձանագրած երկրները[12]

Երկիրը	PDI	IDV	**MAS**	UAI
Ուրուգվայ	61	36	**38**	100
Գվատեմալա	95	6	**37**	101
Թայլանդ	64	20	**34**	64
Պորտուգալիա	63	27	**31**	104
Չիլի	63	23	**28**	86
Ֆինլանդիա	33	63	**26**	59
Կոստա Ռիկա	35	15	**21**	86
Դանիա	18	74	**16**	23
Նիդեռլանդներ	38	80	**14**	53
Նորվեգիա	31	69	**8**	50
Շվեդիա	31	71	**5**	29

[11] Տե՛ս https://clearlycultural.com/geert-hofstede-cultural-dimensions/masculinity/ (մուտք՝ 20. 01. 2022):

[12] Տե՛ս նույն տեղը:

Հետևաբար, երկխոսության մշակույթի ձևավորման տեսանկյունից առնականության բարձր ցուցանիշները կարող են լրջորեն խոչընդոտել հասարակական-քաղաքական հիմնախնդիրները դեպի խաղաղ կարգավորման հուն ուղղորդելը, իսկ ցածրի դեպքում, ընդհակառակը, քաղաքական երկխոսության մշակույթի ձևավորման ու արմատավորման համար ավելի նպաստավոր պայմաններ են ստեղծվում: Ցավոք, Հայաստանի Հանրապետության համար առանձին, հոֆսթեդյան մեթոդաբանությամբ իրականացված ավարտուն հետազոտություններ դեռ չկան, սակայն ենթադրելի է, որ մեզ մոտ էլ առնականության MAS չափորոշիչը բավականաչափ բարձր կստացվեր: Բնականաբար, հակամարտությունների խաղաղ կարգավորման ու երկխոսույթային մշակույթի ձևավորման համար անհրաժեշտ է նախևառաջ հասարակական գիտակցության և ընկալումների մակարդակում թուլացնել «տղամարդկային», քաղաքական կոշտ գործելաոճը՝ այն փոխարինելով ավելի փափուկ տեխնոլոգիաներով: Օրինակ՝ այս առումով ամենևին պատահական չեն ժողովրդավարական բարեփոխումների շրջանակներում հասարակության քաղաքական կյանքում կանանց քաղաքական մասնակցությունը խթանելու նախաձեռնությունները, որոնք օրենսդրական և նորմատիվային մակարդակում փորձում են փոխել ուժերի հարաբերակցությունը՝ մեծացնելով կանանց ներգրավումը, դրանով իսկ քաղաքականության մեջ ներմուծելով նաև հանդուրժողականության, երկխոսության, զսպվածության ու հավասարակշռության տարրեր:

Հասարակության մեջ առնականության թուլացման, հակամարտությունների ու վիճահարույց հարցերի խաղաղ կարգավորման, քաղաքական երկխոսության մշակույթի արմատավորման գործում կարևոր է նաև քաղաքական համակարգի, պետության շրջանակներում գործող՝ կոնֆլիկտայինից երկխոսույթային վարքագծի անցնելու համար նախատեսված, համընդհանուր ճանաչում գտած կանոնների ու նորմերի, քաղաքական կոնֆլիկտների կարգավորմանը միտված համապատասխան ինստիտուտների ու ընթացակարգերի դերը:

Ֆորմալ կանոնների և ընթացակարգերի ստեղծումն ընդհանուր առմամբ կարելի է համարել ժողովրդավարության համախմբման ու քաղաքական ինստիտուցիոնալացման կարևոր բաղադրատարրերից մեկը, որը օգնում է կարգավորելու հակամարտող սուբյեկտների փոխհարաբերությունները: Այլ կերպ ասած՝ խոսքը ժողովրդավարության համախմբման հարացույցում հայտնի «խաղի որոշակի կանոնների» մասին է, որին հետևում են կոնֆլիկտներում ընդգրկված բոլոր կողմերը, և որը բնորոշ է ժողովրդավարական համակարգերին:

Հոֆսթեդյան էթնոմետրիկական ցուցիչներից երկխոսության մշակույթի հետ որոշակի կապ կարող է ունենալ նաև հաջորդ՝ անորոշություններից խուսափելու (Uncertainly Avoidance Index) ցուցիչը: Այն հասարակության անդամների վերաբերմունքն է անորոշությունների նկատ-

մամբ, թե ինչպես են նրանք արձագանքում անհարմարություններին ու երկիմաստ իրավիճակներին[13]: Ըստ այդմ էլ UAI բարձր ցուցիչներ ունեցող երկրներն ու մշակույթներն ամեն կերպ խուսափում են անորոշություններից, ձգտում են նորմերի կամ ավանդույթների միջոցով խստորեն կանոնակարգել հարաբերությունները, հետևում են ձևայնացված հրահանգներին, մի կողմից հակված են ներխմբային համերաշխության, իսկ մյուս կողմից անհանդուրժողական վերաբերմունք ունեն իրենց գաղափարներից ու վարքագծից տարբերվող խմբերի և մարդկանց նկատմամբ: Ընդհանուր առմամբ, նման մշակույթները դիմակայում են բոլոր տեսակի փոփոխություններին ու հակված չեն ռիսկի, առանձնապես չի խրախուսվում նախաձեռնողականությունը, իսկ կոնֆլիկտներն ընկալվում են որպես գոյություն ունեցող կարգին սպառնացող, բացառապես բացասական երևույթներ: Այդ տեսանկյունից նման հասարակությունների համար կանխատեսելիությունն ու կայունությունը բարձրագույն արժեքային ուղենիշներ են: Մինչդեռ ժողովրդավարության համախմբման համատեքստում հասարակության մեջ երկխոսության մշակույթի արմատավորումը կարող է հանգեցնել նրան, որ ժողովրդավարական ինստիտուտների և ընթացակարգերի ներդրմանն ու սովորական գործառությանը զուգահեռ՝ հասարակական-քաղաքական գիտակցության մակարդակում կոնֆլիկտն ընկալվի որպես բնականոն, այլ ոչ թե բացասական երևույթ, իսկ հասարակական գիտակցությունն ընդունի նրա լեգիտիմությունը (այսինքն՝ կոնֆլիկտի գոյության իրավունքը)[14]:

Այդ տեսանկյունից «անորոշությունից խուսափելու» ցածր մակարդակ արձանագրած մշակույթներում ավելի հանդուրժողական վերաբերմունք է նկատվում անորոշությունների, հասարակության մեջ ծագած կոնֆլիկտների նկատմամբ, դրանք ընդունվում են որպես բնականոն երևույթներ, որոնց պետք է ավելի հավասարակշռված ու հանգիստ արձագանքել: Նշյալ հասարակություններում ավելի արագ են ընթանում բարեփոխումները, հեշտ են ընկալվում տնտեսական, քաղաքական, մշակութային զարգացման նոր միտումները, խրախուսվում են նորարարությունն ու նախաձեռնողականությունը: Սակայն պետք է նշել, որ նման հասարակություններում մեծանում է նաև ռիսկի գործոնը: Ընդհանրապես, անորոշության գործոնը ժողովրդավարական բարեփոխումների ու հատկապես համախմբման գործընթացում առանցքային տեղ է զբաղեցնում այն աստիճան, որ նույնիսկ հայտնի անցումագետ Ա. Պշևորսկին ժողովրդավարությունը սահմանում է որպես կազմակերպված անորոշություն[15]:

---

[13] Տե՛ս National Culture, www.http://geert-hofstede.com/national-culture.html (մուտք՝ 20. 01.2022):

[14] Տե՛ս **Խ. Գալստյան,** Քաղաքական բանակցություններ. տեսություն և պրակտիկա, Եր., 2007, էջ 119:

[15] Տե՛ս **Пшеворски А.** Демократия и рынок. Политические и экономические реформы в Восточной Европе и Латинской Америке. М., РОССПЭН, 2000, էջ 31:

Հետևաբար, կարելի է փաստել, որ այն հասարակություններում, որտեղ ժողովրդավարական խաղի կանոնները վերջնականապես դեռ չեն հաստատվել, ու կան ինստիտուցիոնալ բազմաթիվ անորոշություններ հասարակության քաղաքական ինքնակազմակերպման ինստիտուցիոնալ-սահմանադրական դիզայնի շուրջ, հասարակական-քաղաքական «մեծ երկխոսության» ճանապարհով խաղի կանոնների որոշակիացումն ու հստակեցումը տվյալ հասարակության քաղաքական դիսկուրսում առավել պահանջված հիմնախնդիրներից են: Ուստի երկխոսության մշակույթը պահանջված կարող է լինել բարձր UAI գործակից ունեցող երկրներում: Առաջ քաշված այս թեզի օգտին է խոսում նաև երկրների դասակարգումն ըստ UAI գործակցի, որտեղ մեզ հետաքրքրող «ժողովրդավարական երրորդ ալիքի» երկրների մեծ մասում այդ ցուցիչը բարձր է *(տե՛ս աղյուսակ 6):*

Աղյուսակ 6

«Ժողովրդավարության երրորդ ալիքի» անորոշության (UAI) բարձր ցուցանիշներ արձանագրած երկրները[16]

Երկիրը	PDI	IDV	MAS	**UAI**
Հունաստան	60	35	57	**112**
Պորտուգալիա	63	27	31	**104**
Լեհաստան	68	60	64	**93**
Արգենտինա	49	46	56	**86**
Իսպանիա	57	51	42	**86**
Հարավային Կորեա	60	18	39	**85**
Հունգարիա	46	55	88	**82**
Չեխիա	57	58	57	**74**

Ընդ որում՝ կարելի է տեսնել հետևյալ պատճառահետևանքային կապը. որքան բարձր է երկրների անորոշության ցուցանիշը, այնքան տվյալ հասարակությունում բացակայում են երկխոսույթային պրակտիկաները, կամ էլ հասարակությունը նման երկխոսությունների խիստ պահանջ է զգում:

Ինչ վերաբերում է IDV գործակցին (անհատականություն vs կոլեկտիվիզմ) ու ժողովրդավարության համախմբման համատեքստում հասարակության մեջ երկխոսության մշակույթի արմատավորման հիմնահարցին, ապա այստեղ ևս հետաքրքիր օրինաչափություններ են նկատվում: Նախ, այս գործակիցը ցույց է տալիս, թե տվյալ մշակույթում մարդիկ ինչ չափով են ինտեգրված ավելի մեծ սոցիալական խմբերում: Ըստ այդմ էլ անհատականության բարձր ցուցանիշներ ունեցող երկրներում մարդկանց միջև սոցիալական կապերն ավելի թույլ են արտահայտված, «Ես»-ը գերակայում է «Մենք»-ի նկատմամբ, հասարակության մեջ ավելի բարձր են գնահատվում այնպիսի արժեքներ,

[16] Տե՛ս http://www.clearlycultural.com/geert-hofstede-cultural-dimensions/uncertainty-avoidance-index/ (մուտք՝ 20.01.2022):

ինչպիսիք են՝ մարդու անհատականության ընդգծումը, ազատությունը, անձնական կարիքների առաջնային բավարարումն ու նպատակասլացությունը, ընտանիքի փոքր՝ ատոմար մոդելի նախապատվությունը և այլն: Ի հակադրություն դրա՝ կոլեկտիվիստական մշակույթներում «Մենք»-ը գերակշռում է «Ես»-ի, խմբային շահերը՝ անհատականի նկատմամբ, ավելի բարձր է ներխմբային միասնականությունը, տարածված է ընտանիքի մեծ (որը ներառում է ողջ գերդաստանը) մոդելը, որտեղ մարդը հոգ է տանում և պատասխանատվություն է կրում ոչ միայն իր, այլև ընտանիքի մնացած անդամների համար: Այստեղ ավելի տիրապետող է կլանային մտածողությունը:

Երկխոսության մշակույթի ձևավորմանը նպաստելու տեսանկյունից IDV ցուցիչը երկակի ազդեցություն կարող է ունենալ: Մի կողմից անհատականության բարձր ցուցանիշները կարող են վկայել երկխոսույթային պրակտիկաների հաճախականության մասին, քանի որ դասական իմաստով, ինչպես Վ. Մեժունն է նշում, երկխոսությունը ենթադրում է ազատ մտածող և գործող անհատների առկայություն, և ամենին էլ պատահական չէ, որ երկխոսույթային մտածողությունը ծնունդ է առել հենց հին հունական ժողովրդավարության ընդերքում[17]: Այս թեզը հաստատվում է նաև հոֆսթեդյան վարկանիշային աղյուսակում, որտեղ IDV բարձր ցուցանիշներ արձանագրած բոլոր երկրները պատկանում են կայուն ժողովրդավարությունների շարքին *(տե՛ս աղյուսակ 7)*:

Աղյուսակ 7

Անհատապաշտության (IDV) բարձր ցուցանիշներ ունեցող երկրները[18]

Երկիրը	PDI	**IDV**	MAS	UAI
ԱՄՆ	40	**91**	62	46
Ավստրալիա	36	**90**	61	51
Մեծ Բրիտանիա	35	**89**	66	35
Նիդեռլանդներ	38	**80**	14	53
Նոր Զելանդիա	22	**79**	58	49
Իտալիա	50	**76**	70	75
Բելգիա	65	**75**	54	94
Դանիա	18	**74**	16	23
Ֆրանսիա	68	**71**	43	86
Շվեդիա	31	**71**	5	29
Իռլանդիա	28	**70**	68	35
Նորվեգիա	31	**69**	8	50
Շվեյցարիա	34	**68**	70	58
Գերմանիա	35	**67**	66	65

[17] Տե՛ս **Межуев В.** Диалог между цивилизациями и Россия // От диалога цивилизаций к сотрудничеству и интеграции. Наброски проблемного анализа (Якунин В.И., Сулакшин С.С., Межуев В.М. и др), М., 2006, էջ 25:

[18] Տե՛ս Individualism, http://www.clearlycultural.com/geert-hofstede-cultural-dimensions/individualism/ (մուտք՝ 22.01.2022):

Մի օրինաչափություն ևս. այս գործակիցը բացահայտում է նաև արևմտյան և արևելյան մշակութային ու աշխարհայացքային տարբերությունները. եթե բարձր IDV ցուցանիշներ արձանագրած երկրները պատկանում են բացառապես արևմտյան մշակույթին, ապա հակառակ պատկերն է ցածր IDV ունեցող երկրների դեպքում, որոնք արդեն հիմնականում դասվում են արևելյան մշակութային ենթաշերտին *(տե՛ս աղյուսակ 8)*:

Աղյուսակ 8

Անհատապաշտության ցածր դասիչ (IDV) ունեցող երկրները[19]

Երկիրը	PDI	**IDV**	MAS	UAI
Չինաստան	80	**20**	66	40
Գանա	77	**20**	46	54
Նիգերիա	77	**20**	46	54
Սիեռա Լիոնե	77	**20**	46	54
Սինգապուր	74	**20**	48	8
Թայլանդ	64	**20**	34	64
Սալվադոր	66	**19**	40	94
Հարավային Կորեա	60	**18**	39	85
Թայվան	58	**17**	45	69
Պերու	64	**16**	42	87
Կոստա Ռիկա	35	**15**	21	86
Ինդոնեզիա	78	**14**	46	48
Պակիստան	55	**14**	50	70
Կոլումբիա	67	**13**	64	80
Վենեսուելա	81	**12**	73	76
Պանամա	95	**11**	44	86
Էկվադոր	78	**8**	63	67
Գվատեմալա	95	**6**	37	101

Սակայն, եթե հարցին մոտենանք մյուս կողմից ու երկխոսությունը դիտարկենք որպես մարդկանց համատեղ գործունեության արգասիք, ապա կարող ենք պնդել, որ կոլեկտիվիստական մշակույթներում ևս երկխոսության մշակույթի ձևավորման համար որոշակի նպաստավոր պայմաններ են ստեղծվում. չէ՞ որ այս դեպքում պահանջվում են հասարակական առնվազն նվազագույն համերաշխություն և ներդաշնակություն, որոնց առանց երկխոսության մշակույթի անհնար է հասնել:

Այսպիսով, կարելի է փաստել, որ անհատականության ցուցանիշի ազդեցությունը երկխոսության մշակույթի վրա երկակի կարող է լինել՝ մի դեպքում խթանելով անհատական ուղիղ երկխոսույթային պրակտիկաները, իսկ մյուս դեպքում՝ խմբային անուղղակի դիսկուրս-երկխոսությունները, որտեղ առաջնայինը ենթատեքստային հաղորդակցությունն է:

[19] Տե՛ս նույն տեղը:

Քանի որ Գ. Հոֆսթեդի գործարար մշակույթի չափման մյուս երկու գործակիցների՝ կոնֆուցիական դինամիզմի կամ երկարաժամկետ կողմնորոշվածության (LTO, CDI) ու պահանջմունքների նկատմամբ զսպվածության (Indulgency) տվյալները ավարտուն չեն, դժվար է դիտարկել դրանց դրսևորման առանձնահատկությունները երկխոսության մշակույթ-ժողովրդավարության համախմբում համատեքստում: Սակայն մնացած չորս ցուցիչների համեմատական վերլուծությունը առնվազն թույլ է տալիս կարծել, որ հոֆսթեդյան մեթոդաբանությունը լիովին կիրառելի է ժողովրդավարության «երրորդ ալիքի» մշակութային օրինաչափությունները վեր հանելու, ժողովրդավարության համախմբման համատեքստում երկխոսության մշակույթի դերը բացահայտելու համար:

ХАЧИК ГАЛСТЯН – *Особенности применения этнометрической методологии в контексте изучения демократических транзитов.* – Основная цель данного исследования — выявление особенностей применения этнометрической методологии в контексте изучения демократических транзитов. Данная методология, предложенная голландским исследователем Г. Хофстеде, изначально использовалась для выявления закономерностей формирования деловой культуры разных стран, а также между политическими конфликтами и насильственными явлениями.

В рамках статьи, в контексте опыта демократического перехода стран «третьей волны», рассматриваются четыре основных этнометрических индикатора Г. Хофстеда: дистанция от власти (PDI), маскулинность (MAS), избегание неопределенности (UAI) и индивидуализм (IDV). В частности, утверждается, что в тех странах, где наблюдаются высокие показатели дистанции от власти (PDI), процесс консолидации демократии замедляется и не способствует формированию диалоговых практик. А в случае определенной «диалоговой притягательности» основные игроки политического поля - власть и оппозиция, проявляют политическую волю, стремятся нивелировать накопившиеся в обществе проблемы, в том числе неравномерное распределение государственных ресурсов, направляют политические процессы в русло институционализации политического диалога.

В статье рассматриваются также парадигма демократического транзита, в контексте демократических транзитов выявляются взаимосвязи между культурой политического диалога и демократического перехода, в свете этнометрической методологии раскрываются основные закономерности между этими явлениями.

Ключевые слова: *этнометрика, культура политического диалога, демократический переход, индекс дистанцированности от власти (PDI), индекс маскулинности (MAS), индекс избегания неопределенности (UAI), индекс индивидуализма (IDV)*

KHACHIK GALSTYAN – *Features of the Application of Ethnometric Methodology in the Context of the Study of Democratic Transitions*. – The main purpose of this study is to identify the features of the application of ethnometric methodology in the context of the study of democratic transitions. This methodology, proposed by the Dutch researcher G. Hofstede, was initially used to identify patterns in the formation of business culture in different countries, as well as between political conflicts and violent phenomena.

Within the framework of the article, in the context of the experience of the democratic transition of the “third wave” countries, four main ethnometric indicators of G. Hofstede are considered: distance from power (PDI), masculinity (MAS), uncertainty avoidance (UAI) and individualism (IDV). In particular, it is argued that in those countries where high indicators of power distance (PDI) are observed, the process of democratic consolidation is slowing down and does not contribute to the formation of dialogue practices. And in the case of a certain “dialogue attraction”, the main actors in the political field - the authorities and the opposition, show political will, seek to level the problems that have accumulated in society, including the uneven distribution of state resources, direct political processes towards the institutionalization of political dialogue.

The article also examines the paradigm of democratic transition, some patterns and relationships between the culture of political dialogue and democratic transition, etc.

Key words: *ethnometrics, culture of political dialogue, democratic transition, Power Distance Index (PDI), Masculinity Index (MAS), Uncertainty Avoidance Index (UAI), Individualism Index (IDV)*